№ 88 Յունիսի 11 Հաբաթ 1883 Յունիսի 11 Հաբաթ № 88

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաքլիսայից։ Նամակ Բագուից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մարցէլլա կամ առակ բաղդի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ

Յունիսի 7-ին

Ոչ մի բան այնքան վատ ներգործութիւն չէ անում, մանաւանդ, երկրագործ հասարակութեան վրա, որքան գարնան երաշտութիւնը։ Երբ մի քանի օր անձրևը ուշանում է, երբ երաշտութեան պատճառով նորածիլ արտերը սկսում են չորանալ, ժողովուրդը սաստիկ յուսահատութեան մէջ է ընկնում։ Երաշտութիւնը յուսահատված ամբոխին դարձնում է ամենամոլեռանդ քրիստոնեայ։ Ամենքն էլ այդ ժամանակ երևում են ամենաբարեպաշտ մարդիկ. ամեն վայրկեան Աստուծոյ անունն են կրկնում, առատ ժամ և պատարագ անում, մատաղներ մորթում, սրբերին խունկ ու մոմ խոստանում։ Կանայք, բոբիկ ոտքով դունէ դուռ ընկած «սրբի սէր» են հաւաքում, մի քանիսը տէրտէրի էշը ջուրն են գցում, փոքրիկ մանուկները «Նուրին նուրին» մանգալիս, Աստուածածնի համար մոմաղին հաւաքում, վերջապէս իրանց բարեպաշտութիւնը հասցնում են վերին աստիճանի, որպէս զի Աստուած գթայ և մի քանի կաթիլ անձրև ցողէ պարարքով, փոխով, քրտինքով ցանված գիւղացու արտերի վրա։ Բայց երբ հունձը սկսվեց, իսկոյն մեր ջերմեռանդ քրիստոնեաները դադարում են ամեն տեսակ բարեպաշտութիւն գործելուց և սկսում են միմեանց ոտքի տակ ականատ դնել, միմեանց մատնել, դատաճանել, զրպարտել։

Այս երևոյթները կրկնվում են, առանց բացառութեան, բոլոր գիւղերում, ուրեմն և մեր Ղարաքիլիսայում, որի մասին մանաւորապես պէտք է ասելիքներս։

Ղարաքիլիսեցիք մի աննեղելի յանցանք են գործում, կատարելապէս մեղանչում են իրանց խղճի և Արարչի առաջ, երբ Աստուծուց անդադար անձրև խնդրելով իրանց արտերի համար, մի և նոյն ժամանակ անտես են անում Վանանց ասված ձորի յորդառատ առուակը, սուրբ կիրակի արծաթափայլ առուն, Վարդանլի գետակը, որ գիշեր ցերեկ, արտերի միջից ճեղքելով, խոխոջալով ի զուր անցնում, գնում են և ծիծաղում ղարաքիլիսեցիների խելքի աղքատութեան, աննեղելի անտարբերութեան և մեռելային ծուլութեան վրա, որ մեղանչում են Աստուծու դէմ, չը կամենալով Աստուածային այդ առատ պարգևներից օգտվել։ Ի՞նչ դժուար է, տան գլուխ մի մի բուբլի ծախսել, հերթով մշակներ հանել, հարկաւոր տեղերից ջրանցքներ բանալ և արտերը ջրել։ Քեօխվի պարտականութիւնն է ուղղակի ստիպել ընակիչներին հանդը քշել և ջրանցքներ շինել տալ։

Ինչպէս բոլոր գիւղերի, այնպէս էլ Ղարաքիլիսայի ներկայ դրութիւնը աննախանձելի է։ Ամբողջ Ղարաքիլիսայում հազիւ կարելի է մի 50 տուն ճարել, որ իրանց համար հանգիստ ապրում են. մնացածները պարտքերի մէջ մինչև կոկորդը թաղված են։ «Նաղդ» ոչինչ չը կայ. ամեն բան «նիսիա» է։ Երկրագործի եղների գինը նիսիա է, ցանած արտերի ցորենի գինը նիսիա է. ինքը դուքաններից նիսիա բերելով է ապրում. երեխաների կարգալու վարձը տարիներով նիսիա է թողնում, քահանաների օրինակաւորութիւնները նիսիա է անել տալիս։ Վերջապէս, մէջ տեղը կոպէկ չը կայ։ «Ալիի դռակը Վալիի գլուխը դնելով, Վալիի գլխից էլ Ալիի գլուխը դնելով» եօլայ են գնում։ Բայց պարտամուրհակները, տոկոս տոկոսի վրա բարդվելով, կարճ ժամանակից յետոյ հազարների են հասնում։ Հետևանքը սարսափելի է. վաչխառուն, մի օր, յանկարծ, դատաստանական պրիստավի ձեռքով ներկայանում է ու հրամայում է. «վերցրեցէք այն մօղին, այն գորը, այն պղինձը, այս առարկաները»։

Այս դէպքում աղքատ երկրագործը թէ բարոյապէս և թէ նիւթապէս այնպէս է ընկնում, որ մեռնելուց բացի, էլ ուրիշ ոչ մի ձգտում չէ մնում նրա մէջ։ Ամենքն էլ թողնում, հեռանում են։— Այն մարդիկը որ երբեմն սրա արևովն էին երդվում, այսօր բարևել անգամ չեն կամենում։ Բայց ով է մեղաւորը, որ երկնքից հարուստը, երջանիկը, ոսկէ զարդերով հպարտացողը, այսօր կոպէկի կարօտ է, անբախտ է և մուրացկան. շուայլութիւնը։ Ուրիշ ոչ մի պատճառ այնքան յարդելի չէ։ Մեր գիւղացու ձեռքը որ փող է ընկնում, երբ մի փոքր յաջող է ընթանում իր բախտի անիւը, էլ ապագայի վրա չէ մտածում, էլ «ոսքերը վերմակի գեօրայ» չէ երկարացնում, էլ չափ ու ձև չէ անում, ըրթում է մեծ մեծ և ինքն իրան գլորում այսպիսի անելանելի ճախորդութեանց մէջ։

Ահա այսպիսի մի անտանելի ժամանակ սուրբ Սինօդի անօրէնութեամբ Ղարաքիլիսայի գործակալի վրա ուղարկված են Էջմիածնից 1200 բուբլ գումարի «անդորրագրեր» որ հասարակութիւնից յօդուտ ճեմարանի փող հաւաքվի։ Կատարեալ հրաշք է, եթէ այսպիսի մի աղքատ ժողովրդից կարելի լինի այդքան գումար հաւաքել։ Որքան էլ ուզում է գործակալը, թող գրի Սինօդին և ցոյց տայ ժողովրդի աննախանձելի դրութիւնը, բայց նրանք դարձեալ և դարձեալ կրկնում են իրանց «սաստիկ հրամայագրեմ»-ը և «անյապաղ առաքելը զգոյացեալ արդիւնս»։ Բարեկրօն գործակալը, հազար և մի տեսակ դառն չարչարանքների հանդիպելով, հազիւ մի 30 «անդորրագիր սաղայրել է»։

Ցեղական գպրոցիցն էլ պահանջում են 120 ր. թեմական տեսչի վարձ։ Այս պահանջը մեր գրպրոցների համար չափազանց խիստ է, որովհետև գպրոցները նիւթական դրութեան կողմից այս բոպէիս նախանձելի դրութեան մէջ չեն։ Բաւական է ասել որ 6 ամիս է վարժապետները ռոճիկ չեն ստացել և այս բոպէիս պատրաստի ոչ մի կոպէկ չը կայ։ Աշակերտաց թոշակները դըժուարութեամբ են ստացվում, դրամագլխի տոկոսները նոյնպէս կանոնաւոր չեն վճարվում, որովհետև ինչպէս վերևը նկարագրեցինք, ժողովրդի դրութիւնը վատ է. նա ամենից առաջ չարչարվում է մի կտոր հաց ձեռք բերել և յետոյ իր որդու կրթութեան վրա մտածել։

Եթէ կայ Ղարաքիլիսայում այս բոպէիս մի նախանձելի կէտ, դա բնութեան շռայլութիւնն է, որ ամեն բան առատաբար շաղ է տուել Ղարաքիլիսայի գլխին. կանաչազարդ անտառ, ճոխ մարգագետիններ, ծաղկալից դաշտեր, առողջարար և ականակիտ ջրեր, գրաւիչ պարտէզներ և այգիներ, հրաշալի օդ.... Բայց ափսոս որ ամարանոց գնացողները երևի դեռ ծանօթ չեն Ղարաքիլիսայի կլիմային, եթէ ոչ կրկնապատիկ ծախս կանէին և անպատճառ Ղարաքիլիսա կը գային։ Ամեն տեսակ յարմարութիւն պատրաստ է. մաքուր սենեակներ, դրատուն, ամեն տեսակ լրագիր, հեռագրատուն, փօստատուն, դպրոցներ, փոքր ի շատէ հասկացող հասարակութիւն։ Աւելացնենք սրա վրա և այն որ ամեն կիրակի հրաշալի կերպով ածում է գինուորական նուագածուների խումբը։

***

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունիսի 10-ին

Դաղթականութիւնը մի հէշտ միջոց է ժողովրդի սպառման. մանագէտների գործ է ցոյց տալու ժողովրդի սպառման այն միջոցները, որոնք առաջանում են դաղթականութիւնից, բայց մօտիկ անցեալում հէնց փորձը ցոյց տուեց, որ դաղթականութիւնը մի վնասակար բան է, որից առաջանում են մի ազգի համար անթիւ վնասներ։ Բայց ով է այս պարոնը,—հարցրեց ծծմայրը։

—Դա իմ բարեկամ պ. Զախէր-Մաղօխն է։

—Դուք ձեր այցելութեամբ մեզ մեծ պատիւ արեցիք, խնդրում եմ ձեզ, նստեցէք մեզ հետ։

Պառաւը տարաւ մեզ հարևան սենեակը և նստեցրեց նստարանի վրա, մեծ կանաչ վառարանի մօտ։ Նիկիտան մօտ բերեց սեղանը, այն ինչ ծծմայրը բռնեց Մարցէլլայի ձեռքը և մօտեցրեց նրան կոմսին։

—Նայիր այս աղջկան,—ասեց նա,—դա իմ սիրելին է, քեզ նման է, քեզպէս բարի հոգի ունի. սա տասն և ութ տարեկան է, և նայիր, որպէս աքանչելի աճեց և քեզ նման բարի է։ Եթէ դու կամս և հարուստ պարոն չը լինէիր, և նա զեղջկուհի, այն ժամանակ սա քեզ համար յարմար կին կը լինէր։

—Այդ ինչ էք ասում, մեծ մայր,—կտրեց նրա խօսքը Մարցէլլան, սաստիկ կարմրելով, մինչև որ կոմսը նայում էր նրա վրա։

—Լաւ է,—հանգստացնում էր նրան պառաւը,—այժմ մեզ և երեխաների համար մածօն բեր։

Մարցէլլան գնաց և շուտով վերադարձաւ թանձր մածունով լցված մեծ կաւէ ամանով. Լիզկան, որի փոքրիկ գլուխը փոքրիկ բուլթ քթով և խարտեաշ հիւսերով մենք, վերջապէս, տեսանք, բերում էր նրա ետևից դեղին կարագի և սպիտակ պանրի կտոր, որոնք դրված էին մեծ կանաչ տերևների վրա, իսկ Վասկան, կճուճից ազատվելով, հետևում էր Լիզկային սև հացի մեծ պատառով։ Մարցէլլայի հայրը բերեց մեզ համար երկու փայտէ գդալներ, իսկ կոմսը, հանելով իր որսորդական լայն դանակը, նրանով կարագը քսեց սև հացի վրա։ Ամենքը նստեցին սեղանի շուրջը և նայում էին մեզ վրա, մինչև որ մենք ուտում էինք. ծերուկը սկսեց ծխել իր փոքրիկ ծխափողից, պառաւը, ձեռքերը ծկների վրա դրած, նստած էր։ Եւան օրօրում էր իր մանուկին, իսկ Մարցէլլան սկսեց մանել։ Այդ միջոցին սենեակը մտաւ երիտասարդ գիւղացին նոր ամանով։

—Ահա կաթ երեխաների համար, մեծ մայր,—ասեց նա։

—Լաւ է,—պատասխանեց պառաւը,—դնէ յատակի վրա դիր։ Բայց ո՞ւր են երեխաները։

Եւան երեխային նստեցրեց յատակի վրա և շուտով վերադարձաւ երկուսից մինչև չորս տարեկան երկու ուրիշ մանուկների հետ. նա դրեց նրանցից իւրաքանչիւրի ձեռքը մի մի դդալ, և այն ժամանակ երեք երեխաներն ևս նստեցին ամանի շուրջը և սկսեցին խմել կաթը ամանից, բարձր ծծելով։ Արեղակի ճառագայթները խաղում էին սենեակի յատակի վրա. վառարանի վրա հանգստանում էր կատուն, իսկ ծիծեռնակները, որոնք բուն էին դրած պատուհանների վրա, յաճախ ներս էին թռչում այնտեղ և կրկին դուրս էին թռչում բաց դռնով և, ուրախ ճվճվալով, կերակրում էին իրանց ձագերին, որոնք երկարացնում էին դէպի նրանց իրանց սպիտակ փոքրիկ վզերը։

Առ ժամանակ հէնց միայն լսվում էր կաթ խըմելու ձայնը. բոպէական լռութիւնից օգուտ քաղելով, փոքրիկ օձը դուրս սողաց վառարանի տակից և այնպէս շտապով մօտեցաւ ամանին, որի շուրջը նստած էին մանուկները, որ միւս օձը, որը հետևում էր նրան, հազիւ կարողացաւ հասնել նրան։ Ես ակամայ վերկացայ տեղից, որովհետև յանկարծ կարծեցի, թէ մանուկներին վրտանգ է սպառնում։

—Ո՛հ, անհանդիստ մի լինիք,—ժպտելով դիմեց ինձ ծծմայրը,—դրանք մեր ընտանի օձեր են։ Դրանց բունը գտնվում է վառարանի տակ, և նրանք միշտ դուրս են սողում այնտեղից, հէնց որ լսում են դդալների ձայնը. դրանք երեխաների հետ մէկ ամանիցն են ուտում, և շատ անգամ այդ օձերից մէկը կամ միւսը քնում է մեր մանուկների օրորոցում։

—Դա անմեղ կենդանի է,—աւելացրեց բարեկամս,—բարեսիրտ, հաւատ ընծայող, մեր գիւղացու բարեկամ և նրա զաւակների բարեկամն է. դու յաճախ դրանց կը տեսնես Գալիցիայի խըրճիթներում, նա բաղդ է բերում այն տանը, որտեղ նա բնակվում է։

Մինչև որ մենք պարապած էինք նախընթաց խօսակցութեամբ, երկու օձերն ևս բարձրացան և, գլխները ամանի մէջ կոխելով, իջեցրին իրանց ճարպիկ լեզուները կաթի մէջ և այնպէս եռանդով սկսեցին լակել, որ մանուկները երկիւղի մէջ ընկան, չը լինի թէ իրանց ընթրիքը կիսով չափ պակասի։ Նրանցից աւագը խորամիտ կերպով բարձրացրեց իր փոքրիկ փայտեայ դդալը և թեթև խփեց օձի գլխին, որը նրա հետ միասին կուլ էր տալի կաթը. օձը յետ սողալով հեռացաւ, բայց յետոյ, մէկ բոպէաչափ նստելով, բոլորովին առանց երկչոտութեան հարևանցի կերպով նայեց բոլոր ընկերութեան վրա և ծածուկ մօտեցաւ կրտսեր երեխային, որի հետ ընկերանալով նա յոյս ունէր աւելի լաւ կերակրվել,—և նորից սկսեց իր գործը։

—Կատարեալ իդիլլիա,—ասեց կոմսը։

Ես տեսնում էի, թէ որպէս նա լաւ էր զգում իրան այդ բարի և պարզ մարդկանց մէջ, և ես ինքս այնպէս տրամադրվեցայ, որպիսին քիչ անգամ եմ փորձել այն կայսառ տարիներում. դա մի տեսակ ներքին աշխարհ էր, նախազգացմունք կամ հասկացողութիւնը այն բանի, ինչ որ մարդկային բաղդ է անուանվում։

Մարցէլլան հեռու էր նստած իր իլիկով և կարծես թէ ամենևին չէր նկատում մեզ։

—Նայիր այժմ այդ աղջկայ վրա,—ասեց կոմսը,—ես որպէս կարողացայ թէպէտ և մէկ բոպէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՑԷԼԼԱ

կամ

ԱՌԱԿ ԲԱՂԴԻ ՄԱՍԻՆ

(Զախէր Մաղօխի)

Վասկան կճուճը գլխին նստարանի վրա բազմող երեխան էր. նա բերանը բացեց, օտարներին տեսնելով, և չէր վստահանում տեղից շարժվել։

Պառաւը լռեց, բայց ուրախ ժպիտը չէր հեռանում նրա շրթունքներից, իսկ նրա աչքերը չէին յպենում կոմսի վրա նայելուց։

—Ո՞րքան դեղեցիկ և ուժեղ ես դու,—խօսեց նա, վերջապէս,—և, ասում են, որ դու լաւ մարդ ես դարձել։ Ես բոլորը գիտեմ, ինչ որ դու անում ես, Գէնդրիկը շատ անգամ պատմում էր ինձ քո մասին։ Ես վաղուց ինքս կը գայի ամրոցը, բայց ոտներս արդէն հրաժարվում են ինձ ծառայել։ Այժմ, Մարցէլլա, բեր մի բան հիւրերի համար, որ և է նախաճաշիկ, ինչ որ կը գտնվի քեզ մօտ։

Մարցէլլան չը պատասխանեց. նրա մեծ կապոյտ աչքերը հետաքրքրութեան և զարմացման անսովոր արտայայտութեամբ նայում էին կոմսի վրա։

—Շատ բան չի գտնվի,—շարունակեց ծծմայրը,—բայց կայ մածօն, կարագ, պանիր և հաց. դու լաւ գիտես, զաւակս, թէ ինչ է գտնվում մեզ մօտ։

—Ես ամեն բանով բաւական կը լինեմ,—պատասխանեց կոմսը,—խնդրեմ ինձ համար նեղութիւն չը քաշէք։

ներ, որոնք անբուժելի են լինում: Մեզ օրինակ ալաշկերտցիների կրած հարիւրաւոր վնասները: Մեր աչքի առաջ են և այն հայ մշակները, որոնք սկսած Բօսֆորից մինչ Կասպից ծովի ափերը ցրված, ենթարկված են տաժանակիր աշխատանքի: Քաղաքացիք հողի հետ այնքան կապ չունեն, ինչքան գիւղացիք. հետևաբար հասարակութեան ուշադրութիւնը պէտք է գրաւեն գիւղերը. այնտեղ են մի ազգի գոյութիւնը պահող ամենամեծ ոյժերը: Քաղաքացիների գաղթելը այնքան ծանրութիւն, վնաս չէ բերում ինչքան գիւղացոց, թէև ընդհանրապէս երկուսն, էլ վնասակար են. բայց տարաբախտաբար մեր գաղթողների մեծ մասը գիւղացիներն են: Հէնց Բագուի մէջ ներկայումս Մաղրասա գիւղից 200-ից աւելի երիտասարդներ կան. նոյնպէս Գիրք գիւղից, և Ղարաբաղի զանազան տեղերից. բայց ինչպէս են դրանք վերադառնում իրանց ծննդավայրը, ինչ ցաւեր են տանում իրանց հետները և ժողովրդի մէջ տարածում, դժուար է այդ դաղտնիքների բացատրելը, թէ ինչ ազդեցութիւն է ունենում ամեն մի արատաւոր սովորութիւն նրանց վրա. և եթէ այդ անառակ սովորութիւնները տարածվեն մեր գիւղացոց մէջ, դժուար է այնուհետև բուժել նրանց այդ ցաւերից: Անբարոյականութեան այդ կէտը փչրելու համար մեր գիւղական ուսուցիչների և քահանաների վրա մեծ պարտք կայ: Արեգակի տակ ամբողջ օրը մեր թափված են փողոցներում հայ և թուրք մշակները, որոնք 5—6 տարի աշխատելով մի երկու հարիւր բուբլի, տանում են իրանց ծննդավայրը վաշխառուի պարտքերը տալու համար: Չէ՞ որ գիւղացիք էլ զանազան դառն ցաւեր ունեն. չէ՞ որ նրանցից շատերին դառն հանգամանքներն են գաղթել տալիս. բայց այնու ամենայնիւ սրբանց ամենի տառջը կարող է առնել հասարակութիւնը, եթէ նրա ամբողջութիւնը ուշադրութիւն դարձնէ գիւղերի վրա: Մեզանում ընդհանրակը գիւղերը ճանաչում են իբրև քէֆերի, ուրախութեանց տեղ, մինչդեռ գիւղը, գիւղական կեանքը, ուսումնասիրութեան մի հարուստ և բազմակողմանի առարկայ է մեր մանագէտների համար: Ցարաբախտաբար մերոնք խորշում են գիւղերից. օրինակը տեսանք, բայց նրան ուղղութիւն տուող, օրինակ հանդիսացողներից էլ, դեռ մէկին չը տեսանք գիւղը ուսումնասիրելիս: Ես ճանաչում եմ մի ծեր հայ մշակի, որը, աւելի քան տասը տարի, պարապվում է բեռնակրութեամբ. և այդ նրա համար արհեստ է դառել, բայց այդ տասը տարում ինչ վնաս ասես չէ կրում նրա ընտանիքը: Միթէ զգալի չէ լինում մի ընտանիքի համար երբ նրա գլխաւոր անդամը տասնեակ տարով բացակայ է գտնվում իրանից. այդ փորձը ես տեսել եմ շատ ընտանիքներում, որ դառնութիւն միայն կրողը կը հասկանայ: Ինչ և իցէ մի արհեստաւորի ուժերից վեր է բացատրել այն վնասները, որոնք առաջանում են գաղթելուց, մանաւանդ այն միջոցները, որոնցով կարելի է առնել գաղթականութեան առաջը. իմ նպատակիցս էլ դուրս է աւելի խօսելը, միայն աչքի առաջ ունենալով Բագուի ներկայ ընկած դրութիւնը, և օգտվելով հանգամանքից, ես կամենում եմ ասել, որ այդ անկումը շատ գիւղերի բարգավաճումն մասամբ նպաստեց: Ինչպէս անցեալ նամակներիս մէկի մէջ բացատրեցի տեղացոց վնասը, որը առաջանում է ժողովրդի գաղթելուց, այսօր էլ նկատում եմ աւելի մեծ օգուտը, որ ստանում են շատ հայ և ռուս գիւղեր:

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ հայրենիք գաղթողների մեծ մասը գիւղացիներ են, լինեն ռուս, թուրք, հայ: Ամեն օր կը լսէք թէ, այս ինչ գործարանում մի քանի մշակներ ջախջախվեցին, այն ինչ տեղ եռ եկող ջրում խաշվեցին, այն ինչ հրդեհում խորովվեցին, մի այլ տեղ ծեծվեցին, դրկվեցին, և քանիսը տարեկան մնում են անյայտութեան մէջ: Բայց ովքեր են այդ մշակները. մեր գիւղացիք, որոնք միակ կապ են հողի և քաղաքային արդիւնաբերութեան մէջ: Պ. Շերվանզադէի, գեղեցիկ և յաջող դուրս բերած պատկերը, որ տպված էր ձեր լրագրում, «Հրդեհ նաւթագործարանում» վերնագրով, ուշադրութեան արժանի է. այդ պատկերը դուրս է բերած այն յաճախ կրկնվող պատկերներից, որոնք առաջանում են հրդեհներից նաւթագործարաններում, լափելով անգին աշխատանքի արտադրութիւններ, և ոչնչացնում մի քանի չնչին մշակներ: Բայց արդեօք հետաքրքրվում է մեր հասարակութիւնը այդ դէպքերով, հետաքրքրվում է թէ, ուր, ինչպէս դրին նրանց դիակները սառը հողի մէջ: Ահա այդպիսի առաջացած դառն և ցաւալի երևոյթները աչքի առաջ ունենալով, ուրախալի է որ այստեղի գործերի դրութիւնը նպաստում է գիւղացիներին դառնալ իրանց հայրենիքը: Գիւղացին բարօրութիւն կունենայ, եթէ պինդ կապվի գիւղի, հողի, այգիների, դաշտի և իր անասունների հետ: Վերջացնում եմ նամակս, ցանկանալով և մեր նաւթագործարանատէրերին յաջողութիւն: Ցանկալի է որ բանուորներ այստեղ դումարվեն գիւղերից ի հարկէ միայն այն ժամանակ, երբ մշակը կը ճանաչվի ոչ իբրև գրաստ, ոչ իբրև լոկ ֆիզիկական ոյժ, բայց որպէս բարոյական և մտաւոր կեանքով ապրելու իրաւունք ունեցող էակ և նրա տեղ, ինչպէս այլազգի ձեռնարկողների մօտ, մեքենաները բանեցին: Իսկ այդպէս լինելու, և այդ նպատակին հասնելու համար, մնում է հին երգը երգել. պէտք է ցանկանալ բարոյական «միութիւն» մեր հասարակութիւնը կազմող այլ և այլ տարրերի մէջ:

Ալէքսանդր Աբելեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, 2 յունիսի

Ձեր պատուական Մշակի № 80-ի ներքին լուրերի շարքում Մոսկվայից ձեզ հաղորդել են, որ իբր թէ «Լազարեան ճեմարանի լիցէօնը փակվում է, իսկ արևելեան լեզուների ամբիոնները տեղափոխվում են Մոսկվայի համալսարանը»: Ցեղիս հայ հասարակութեան անդամներից շատերը, չը գիտեմ որպիսի նենթադրութեան վրա յենլով, կարծում են թէ՝ վերոյիշեալ լուրի հեղինակն իբր թէ ես եմ. այս պատճառով սրբազան պարտք եմ համարում ինձ, իբրև Լազարեան ճեմարանի պաշտօնէիս, հրապարակօրէն և մի անգամ ընդ միշտ յայտնել՝ թէ տեղիս յարգելի հասարակութեան և թէ «Մշակի» միւս ընթերցողներին, որ ես չեմ այդ լուրի հեղինակը, և լուրը, ինքն ըստ ինքեան, անհեղեղ է, սխալ է և միանգամայն հեռու է ճշմարտութիւնից:

Խոնարհաբար կը խնդրեմ ձեզ, յարգոյ խմբագիր, տեղ չնսրհել իմ այս պաշտօնական հերքումիս պատուական «Մշակի» էջերում, որով շատ պարտաւորված կը լինեմ ձեզ:

Խ. Յովհաննիսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Պիատիգորսկ, 4 յունիսի

Պատիւ ունեմ խնդրել ձեզ, պ. խմբագիր, տալ մի անկիւն ձեր լրագրի մերձակայ համարում հետևեալ տողերին. այս օրերս մի քանի անձինք Թիֆլիսից ստացան նամակներ, որտեղ հաղորդում են, իբր թէ Թիֆլիսում լուր է տարածվել թէ Պիատիգորսկում և նրա շրջակայքում երևացել է դիֆտերիտ ցաւը: Երէկ ես ևս ստացայ Քութայիսից հեռագիր ազգ. քահանայ Եարալեանցից՝ որը խնդրում է տեղեկութիւն տալ վերոյիշեալ լուրի մասին: Կարծում եմ՝ որ այդ օրինակ սուտ և անհիմն լուրեր կարող են տարածել միայն այն մարդիկ, որոնք թշնամի են մեր հանքային ջրերին և դիտաւորութիւն ունեն նրանց վնասելու:

Այժմ ժամանակը այն աստիճանի առողջարար է մեզանում որ ոչ թէ էպիդէմիա, այլ և հասարակ հիւանդութիւններ շատ սակաւ են: Լաւ կը լինէր եթէ միւս հայ լրագիրները բարեհաճէին արտատպել նամակիս բովանդակութիւնը:

Բժշկապետ Շլթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի 9-ին, կէսօրին հասաւ Թիֆլիս կոմսական կառավարչապետ իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Դոնդուկով-Կորսակով, վերադառնալով Մոսկվայից, որտեղ նա ներկայ է գտնվել Ն. Մեծութիւնների թագադրութեանը:

«Кавказъ» լրագրին հեռագրում են ԵՐԵՒԱՆԻ հետևեալը: «Յունիսի 8-ին կէսօրից յետոյ, փաշա Հուսէյն-Մաշադի-Ալասկեր-օղլի, փորձ փորձեց սպանել Երևանի քաղաքագլխի պաշտօնակատար Վասակ Պապաջանովին, իր պաշտօնավարութեան ժամանակ: Զարագործի խօսքերից երևում է որ նա ուրիշից դրդված է եղել կատարել այդ յանցանքը:»

Յունիսի 9-ին գիւղերը կրակ յայտնվեցաւ այն տան մէջ, որտեղ զետեղված է Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը և որբերի դատարանը: Շուտով հրդեհը տարածվեց ամբողջ տան վրա և գործադրված բոլոր միջոցները չը կարողացան փրկել տունը, որ կատարելապէս այրվեցաւ ներքին յարկում գտնվող իր բոլոր խանութներով: Ասում են քաղաքային վարչութեան և որբերի դատարանի թղթերը դրեթէ բոլորովին այրվեցան: Այրվելու յայտնվեցաւ որ քաղաքում բաւականացուցիչ բանակութեամբ ջուր չը կայ այդ տեսակ դիպուածների համար, չը կան պօմպաներ, ջրհաններ:

ՓՕԹԻՒՑ մեզ գրում են որ այդտեղ չքեղութեամբ է կատարված եղել Կայսրի թագադրութեան տօնախմբութիւնը: Քաղաքը գեղեցիկ կերպով զարդարված է եղել և նոյն օրը, պատարագից յետոյ, քաղաքի հրապարակի վրա, զօրքի և խուռն բազմութեան ներկայութեամբ մաղթանք կատարվեցաւ: Այդտեղի բնակիչ, հայազգի պ. Կարապետ Պօլօվ, ի պատիւ թագաւոր Կայսրի օծման և թագադրութեան նուիրել է 1000 ր., որոնցից 500 բուբլ այդտեղ ներկայ գտնված զօրքերի ճաշկերոյթին, իսկ միւս 500 բուբլ Փօթիի աղքատ և օրիորդաց դպրոցներին:

«Մշակի» անցեալ համարում տպված, խմբագրին Թիֆլիսից ուղղված նամակում մի սխալ է մտել. նամակը գրված է եղել յունիսի 6-ից, բայց սխալմամբ տպվել է նամակի ճակատին 16 յունիսի, այն ինչ մեր լրագրի այդ համարը հրատարակվել է յունիսի 9-ին:

համեմատել այդ իդէալական գեղեցկութիւնը Ֆօրնարինայի գեղեցկութեան հետ: Միայն կիսախաւար ժամանակ կարելի էր այդպէս սխալվել: Այժմ նա ինձ բոլորովին ուրիշ տեսակ է երևում. որպէս զարմանալի լաւ է արտայայտվում նրա դէմքի վրա կանացի հոգու ազնիւ, մաքուր անարատութիւնը: Դա երկրորդ Սիվիլլա Գվերչինօ է: Բայց ժամանակ է ուղևորվել:

Կոմսը վերկացաւ, համբուրեց իր ծծմօրը, սրբանց սեղմեց Եւայի, Լիզկայի և գիւղացիների ձեռքերը, փաղաքշեց մանուկներին և, վերջապէս, մօտեցաւ Մարցելլային:

—Մնաս բարև,—ասեց նա:

—Աստուած ձեզ բարի տայ,—պատասխանեց աղջիկը հանգիստ նայելով նրա վրա,—և մանաւանդ բաղդ:

—Եւ թող Նա պահպանէ քեզ այնպէս, որպէս որ դու կաս,—ասեց կոմսը, համբուրելով նրա ճակատը. նա սկսեց դողալ, երբ կոմսի շրթունքները մերձեցան նրան, բայց չը հեռացաւ նրանից:

—Բարի գիշեր:

—Բարի գիշեր, առողջ լինիք:

Լռութեամբ անցանք մենք գիւղի միջով մինչև անտառի շաւիղը: Այդտեղ կոմսը նստեց և նայեց ծռված, ծխից սևացած յարդեայ տանիքի վրա, որի տակ Մարցելլան ծնվեց, և այն խեղճ բնակարանի վրա, ուր հոսում էր նրա պարզ, անմեղ կեանքը: Նա երկար ժամանակ աչքերը չէր հեռացնում այդ տեղից:

—Ես սիրահարված եմ,—վերջապէս մի-տեսակ խուլ ձայնով արտասանեց նա:

—Ալէքսանդր:

—Ինչ արած, այդպէս պատահեցաւ:

—Զարմանում եմ, թէ ինչպէս քո խելքի տէր մարդը կարող էր այդպէս շուտով սիրահարվել:

—Իսկական սէրը յանկարծակի է բորբոքվում սրտի մէջ, հէնց որ երկու բնածին հոգիները ի մի են ձուլվում առաջին հայացքի մէջ. ուրիշ կերպ դա չէ լինում:

—Այդպիսի սէրը միայն զգայողական կարող է լինել:

—Ի հարկէ: Ամեն զօրեղ բարեկամութիւն իր սկիզբն առնում է զգայողութիւնից, առանց նրա գոյութիւն չունի ոչ սէր, ոչ բաղդ. բայց նա չէ կանգնում այդ կէտի վրա: Բայց ներիր, եթէ անգիտութեամբ անմիտ բան ասեցի. այսօր ես ընդունակ չեմ փիլիսոփայութիւն անելու:

Նա վերկացաւ և գնաց այն ճանապարհով, որ տանում էր դէպի գիւղը, գրեթէ առանց հասկանալու, կարծես հալածված սիրոյ յաւիտենական, անհաշիւ զօրութիւնից: Ես հետևեցի նրան: Արդէն բոլորովին մթնեց, միայն տեղ-տեղ փայլում էին ատաղնեները սպիտակ շքեղատեսիլ ամպերի մէջ: Կոմսը պատեց գիւղական համեստ բաղի շուրջը, կանգնեց ցանկապատի մօտ և, արմուկով յենվելով փայտէ մեխերից մէկի վրա, որոնցով նա ամրացած էր, երեսը ձեռքերով ծածկեց: Նա կանգնած էր և կարծես մի ինչոր բանի սպասում էր. յանկարծ աղջիկը կարծես թէ զգաց նրա մօտիկ լինելը. նրա հոգին թռաւ դէպի նրան իր երգի հնչիւնների մէջ. «Մի գնա դու հարսանիք»...

Պատուհանում երևեցաւ պայծառ լոյս, որը ատիճանաբար միշտ աւելանում էր և շուտով վառարանի կարմիր լոյսի առջև մենք տեսանք Մարցելլային. նա յարդը դցում էր կրակի մէջ, յետայ կրակի վրա դրված կաւէ ամանը սկսեց մի ինչոր խոտով լցնել: Նրա գեղեցիկ դէմքը այդ միջոցին ճակատագրական արտայայտութիւն ունէր. նա բարձր արտասանում էր վայրենի, անմիտ խօսքեր, որոնք մասամբ մանկական թոթովանքին էին նմանում, մասամբ էլ զուշակութեան:

—Նայիր նրան,—շշնջելով ասեց ինձ կոմսը:

—Ի՞նչ է անում նա, հարցրի ես:

—Նա հմայում է:

—Ո՞ւմն է կամենում նա հմայել:

Կոմսը լռեց, և Մարցելլան կրկին սկսեց երգել, կարծես պատասխանելով իմ հարցմունքին. «Այրում են յարդ, եփում են խոտեր,—տեսայ ինքս, իմացայ, բայց արդէն ուշ է, խեղճ երիտասարդ, ցանցի մէջ ընկար դու:»

—Ես թունաւորված է, կամենում ես ասել,—աւելացրեց կոմսը:

—Ի՞նչպէս պէտք է հասկանալ այդ:

—Այդ երգի մէջ ողբերգական վերջաբանութիւն կայ. հմայողը վերջը խանդոտութիւնից թունաւորում է իր սիրականին. դա նախազգուշութեան նման է: Ես առհասարակ մեծ նշանակութիւն եմ տալի նախազգացումներին և նախագուշակութիւններին, բայց հաստատ կամքը կարող է ճակատագրին յաղթել: Եփիր, և հմայիր, որքան ուզում ես, բայց իմ և քո մէջ, որպէս իմ ծծմօր առակի մէջ, ամեն բան պէտք է լաւ վերջանայ: Ոչ, դու հմայող չես, այլ բ ա խ տ, որը, նստած չէմքի վրա, մանում է ինձ սպասելով. և ես կը գամ, երբ ժամանակս կը հասնի:

Իմ բարեկամը այժմ ամեն օր գնում էր Ցօլօբաղ Մարցելլայի մօտ և, որքան հնար կար, ես միշտ թողնում էի նրան միայնակ իր սիրած աղջկայ հետ: Ես չէի նկատում նրա մէջ սիրահարվածների սովորական յուզմունքը. տանը, ինչպէս և միշտ, նա պարապում և աշխատում էր, և բոլորովին անհոգ և ուրախ էր երևում: Մարցելլայի մասին նա քիչ էր խօսում: Նրա զգայմունքն էր մի-տեսակ ամօթխած, ընթոյչ և մաքուր:

Մի անգամ նրա գրասեղանի վրա աչքիս ընկաւ մի գեղեցիկ փոքրիկ ջրաներկ պատկեր, որ ներկայացնում էր Սիվիլլա Գվերչինօին: Ես երկար նայում էի այդ պատկերի վրա:

—Ձիշդ որ նմանութիւն կայ,—ասեցի ես:

—Ո՛հ, եթէ դու ճանաչէիր բնագիրը,—բացականչեց կոմսը:—Եթէ դու տեսնէիր Մարցելլային, երբ նա ծածկում է գլխին իր կանաչ թաշկինակը ապարօշի նման, այնպէս որ ալիքաւոր մազերը երևում են նրա տակից միայն քունքերի վրա և այդ ժամանակ լսում է ինձ այնպիսի ուշադրութեամբ, ձեռքերը ծալած, գլուխը մի փոքր դէպի աջ թեքելով և բարձրացնելով ինձ վրա աչքերը—այն ժամանակ ես երևակայում եմ, որ տեսնում եմ առաջս գեղեցիկ Սիվիլլային իր հանգիստ վճռութեամբ, իր բարձր անմեղութեամբ և իր հեզ և խորին զգայմունքով: Բայց ամենից գերազանց են նրա աչքերը, այդ թալ երևակայական սաղերը, որոնց մէջ վառվում է մէկ ինչ-որ բան անբմբռնելի ծարաւ: Մարցելլան այն էակներից մէկն է, որոնց հայացքները կարող են գրգռել ամեն տեսակ զգայմունք, և ժամանակ առ ժամանակ այնպիսի հրճուանք է կարդացվում նրա աչքերում, կարծես թէ նրա առաջ մեծ և սուրբ յայտնութիւն կատարեցին: Բայց Սիվիլլա Գվերչինօ յաւիտեան մնում է համր, իսկ Մարցելլան խօսում է և ինչպիսի զարմանալի ձայնով: Ես պատրաստ եմ ամբողջ գիշերներ լսել այդ ձայնը. ես նոյնքան սիրում եմ նրա քաղցրանազութիւնը, որքան սիրում եմ և երգեհոնի, աղմկալից անտառի կամ խորին, թանձր զանգակի ձայները: Երէկ երեկոյեան մի ինչ-որ օտարոտի բան պատահեցաւ իմ և Մարցելլայի մէջ. այդ նրա ծննդեան օրն էր. նրա տասն և ութ տարին լրացաւ: Ես մտածում էի նրան ուրախութիւն պատճառել և նրա համար մարջաններ բերեցի, իսկ նա—երևակայիր քեզ—չընդունեց մարջանները և հրաժարվեց նրանցից ոչ թէ կոպիտ կերպով, այլ մի-տեսակ տրտմութեամբ, կարծես թէ դրանով կամենում էր յայտնել, որ ես չեմ հասկացել լինէր եթէ միւս հայ լրագիրները բարեհաճէին արտատպել նամակիս բովանդակութիւնը:

Բժշկապետ Շլթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի 9-ին, կէսօրին հասաւ Թիֆլիս կոմսական կառավարչապետ իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Դոնդուկով-Կորսակով, վերադառնալով Մոսկվայից, որտեղ նա ներկայ է գտնվել Ն. Մեծութիւնների թագադրութեանը:

«Кавказъ» լրագրին հեռագրում են ԵՐԵՒԱՆԻ հետևեալը: «Յունիսի 8-ին կէսօրից յետոյ, փաշա Հուսէյն-Մաշադի-Ալասկեր-օղլի, փորձ փորձեց սպանել Երևանի քաղաքագլխի պաշտօնակատար Վասակ Պապաջանովին, իր պաշտօնավարութեան ժամանակ: Զարագործի խօսքերից երևում է որ նա ուրիշից դրդված է եղել կատարել այդ յանցանքը:»

Յունիսի 9-ին գիւղերը կրակ յայտնվեցաւ այն տան մէջ, որտեղ զետեղված է Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը և որբերի դատարանը: Շուտով հրդեհը տարածվեց ամբողջ տան վրա և գործադրված բոլոր միջոցները չը կարողացան փրկել տունը, որ կատարելապէս այրվեցաւ ներքին յարկում գտնվող իր բոլոր խանութներով: Ասում են քաղաքային վարչութեան և որբերի դատարանի թղթերը դրեթէ բոլորովին այրվեցան: Այրվելու յայտնվեցաւ որ քաղաքում բաւականացուցիչ բանակութեամբ ջուր չը կայ այդ տեսակ դիպուածների համար, չը կան պօմպաներ, ջրհաններ:

ՓՕԹԻՒՑ մեզ գրում են որ այդտեղ չքեղութեամբ է կատարված եղել Կայսրի թագադրութեան տօնախմբութիւնը: Քաղաքը գեղեցիկ կերպով զարդարված է եղել և նոյն օրը, պատարագից յետոյ, քաղաքի հրապարակի վրա, զօրքի և խուռն բազմութեան ներկայութեամբ մաղթանք կատարվեցաւ: Այդտեղի բնակիչ, հայազգի պ. Կարապետ Պօլօվ, ի պատիւ թագաւոր Կայսրի օծման և թագադրութեան նուիրել է 1000 ր., որոնցից 500 բուբլ այդտեղ ներկայ գտնված զօրքերի ճաշկերոյթին, իսկ միւս 500 բուբլ Փօթիի աղքատ և օրիորդաց դպրոցներին:

«Մշակի» անցեալ համարում տպված, խմբագրին Թիֆլիսից ուղղված նամակում մի սխալ է մտել. նամակը գրված է եղել յունիսի 6-ից, բայց սխալմամբ տպվել է նամակի ճակատին 16 յունիսի, այն ինչ մեր լրագրի այդ համարը հրատարակվել է յունիսի 9-ին:

Փոթիից մեզ գրում են հետևեալը: «Յունիսի 2-ին այստեղացի մի յոյն երիտասարդ որ վախճանվեցաւ Թիֆլիսում, այս ամսի 5-ին, նրա դիակը բերեցին այստեղ և թաղեցին այստեղի գերեզմանատանը: Բայց թաղելուց 4 ժամ յետոյ, չը գիտենք ինչից ստիպված, նորից հանեցին դիակը, տեղական բժիշկը զննեց նրան և դեռ ոչինչ եզրակացութեան չը հասաւ: Դիակը դրված է գերեզմանատան սենեակում, ահա երեք օր է: Մեռածի դէմքը և կազմուածքը կենդանի դիրք են պահում, բերանից ոչինչ վատ հոտ չէ գալիս. կարծում են որ դա մահաքուն (летаргическій сонъ) պէտք է լինի:»

—

«Кавказъ» լրագրին գրում են Գանձակից որ յունիսի 3-ին, երկու օրվայ ծանր չարչարանքից յետոյ այդ քաղաքի մի յղի հայ կին ծնեց մի հինգամսեայ մանուկ, իգական սեռի, որ ունէր երկու գլուխ և չորս աչք: Մանուկի երկու գլուխներն էլ կատարելապէս զարգացած էին: Ռուս լրագրին այդ տեղեկութիւնը հաղորդել է երեխային ընդունող մանկաբարձուհին:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Մայիսի 31-ին, երեկոյեան մօտ ժամը 8-ին, սարսափելի դղրդիւնով Նոբէլի գործարանում կաթսաներից մինը ճայթեց: Այդ ճայթիւնը շատ հեռու լսելի եղաւ: Դրանից առաջացած հրդեհը, որ բաւական վտանգաւոր կերպարանք առաւ, 45 րօպէի մէջ հանգցվեցաւ, հսկայական ջրհանների շնորհով, առանց մի զգալի վնաս պատճառելու գործարանին: Ճայթիւնի ժամանակ բարեբաղդաբար մօտականերում մարդիկ չէն եղել:»

—

Հալաբարի Սուրբ Մարիամեան հայ օրիորդական ուսումնարանի հոգաբարձական-խնամակալական վարչութիւնը կարգադրել է վաղը, կիրակի, յունիսի 12-ին, առաւօտեան ուղիղ $10^1/_2$ ժամին, Եչմիածնեցոց Ս. Գէորգ եկեղեցում պատարագի աւարտելուց յետոյ՝ կատարել զղրոցի գոյութեան տասներկրորդ տարվայ տարեդարձի հանդէսը, որի համար խոնարհաբար խնդրում է ծնողներին, բարերարներին և լուսաւորութեան բոլոր նախանձախնդիրներին յարգել զղրոցը իրանց ներկայութեամբ: Հանդէսը կը կատարվի յարմարութեան համար Հալաբարի Քաղաքային զղրոցի դահլիճում, Պոկրովսկի ղօրանոցի հանդէպ, Ղազարեանցի տանը, № 5.

—

Մեզ պատմում են որ այս տարի Հալաբարի Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի հարցաքննութիւնները շատ աջող կերպով անցան: Հարցաքննութիւնները շարունակվեցան հինգ օր և ամեն օր այցելուների բաւական մեծ թիւ էր լինում: Թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ պ. Դարսկի մի քանի անգամ այցելեց այդ զղրոցի հարցաքննութիւններին և մեզ պատմում են որ նա հեռացաւ այդ զղրոցից շատ լաւ տպաւորութեամբ աշակերտուհիների առաջադիմութեան վերաբերութեամբ: Ցաւալի է միայն որ զղրոցի տեսուչը և ուսուցչական խումբը գործում են համարեա առանց որևէ նիւթական վարձատրութեան: Ցանկալի է որ հայ հասարակութիւնը նիւթապէս պահպանէր այդ օգտաւէտ հիմնարկութիւնը, Հալաբարի պէս թաղի մէջ գտնվող այդ օրիորդական զղրոցը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրներում կարդում ենք որ լուր կայ իբր թէ Թիւրքաց տէրութիւնը մտադիր է Հայաստանի մէջ ռէֆօրմների մտցնելու գործը կատարել առանց Անգլիայի հետ խորհրդակցելու, միմիայն Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնելով: Մի և նոյն ժամանակ հաւատացնում են, որ Թիւրքաց տէրութիւնը դիտաւորութիւն ունի մի քանի առանձնաշնորհութիւններ տալ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովին:

—«Memorial Diplomatique» լրագիրը հաղորդում է որ Բ. Դուռը նորից դիմեց Լոնդոնի կաբինետին պնդողապէս պահանջելով, Բերլինի դաշնագրին համաձայն, որ Դունայի վրա գտնված ամրոցները քանդվին: Գրէնվիլ շատ քաղաքավարի, բայց անորոշ մի պատասխան է տուել, որի մէջ անգլիական արտաքին գործերի մինիստրը խոստմունքներ է անում, բայց չէ որոշում խոստմունքների կատարելու ժամանակը: Բրիտանական կառավարութիւնը դարձեալ իր այն համոզման մէջ է մնում, իր տուած պատասխանի մէջ, որ նախ և առաջ Բ. Դուռը պէտք է Հայաստանում մտցնի ռէֆօրմները:

—Որովհետև իշխան Բիսմարկին չաջողվեցաւ համաձայնութիւն կայացնել Վատիկանի հետ, նա մտադրվեցաւ առանց շարունակելու բանակցութիւնները սուրբ աթոռի հետ անձամբ վճռել վիճելի հարցը և բաւականացնել պրուսական կաթոլիկներին: Օրերումս լանդտագին մի օրինագիծ ներկայացվեցաւ, որ որոշում է կանոններ եկեղեցու համար Պրուսիայում և ուղղում է 1880 թ. յուլիսի 13-ին և 1882 թ. մայիսի 31-ի օրէնքների թերութիւնները: Լանդտագին ներկայացրած օրինագծի գլխաւոր յօդուածները հետևեալներն են 1) պետութիւնը հրաժարվում է պահանջել եպիսկոպոսներից տեղեկութիւններ յաջորդ քահանաներին և եկեղեցականներին նշանակելու մասին, որոնք հրաւիրվում են իբրև օգնականներ, 2) ոչնչացնվում է հոգևոր դատարանի իրաւասութիւնը հոգևոր աստիճան տալու, եպիսկոպոսական իրաւունքներ ունենալու և հոգևորականութեան կարգապահութեան և կրթութեան մասին, 3) պետութեան veto կարելի է դնել կամ քաղաքական, կամ կրթութեան պակասութեան պատճառով: Ուրեմն կանդիդատների աստուածաբանական ընդունակութիւնը այլ ևս չի քննվի պետութիւնից և 4) քահանաները կարող են պատարագ մատուցանել և ծէսեր կատարել, չը ստանալով քաղաքական իշխանութեան թոյլտուութիւնը: Մի քանի լրագիրներ կարծում են, որ այդ զիջումները կարող են բաւականացնել կաթոլիկներին, իսկ սուրբ աթոռը կարող է նրանց ընդունել կամ ոչ: Ազատամիտ բանակի մէջ անկասկած կաղաղակեն, որ իշխան Բիսմարկի նոր օրինագիծը հաւասար է ճանապարհորդութեանը դէպի Կանոսսա, բայց կանցլերի հեղինակութիւնը կարող է նրանց հանգստացնել և նա արդէն իր գործից օգուտ քաղեց: Հռոմի մէջ այդ շատ լաւ հասկացան և կարդինալ Լակոբինին յանկարծ հարկաւորվեցան Կիսսինգենի ջրերը հէնց այժմ, երբ իշխան Բիսմարկ բժշկվում է այնտեղ: Պրուսական կաթոլիկների «Germania» լրագիրը նոր օրինագիծը համարում է այն օրէնքների մեղմացնելը, որոնց եկեղեցին չէր կարող ընդունել, թէպէտ կաթոլիկ պատգամաւորները յօդուտ նրա ձայն կը տան նրա պարտականութեան լաւ մասի պատճառով:

—Աւստրիական լրագիրներին գրում են Էրզրումից, որ Թիւրքաց հայերի դաղթականութիւնը դէպի Ռուսաստան աւելի և աւելի մեծ ընդարձակութիւն է ստանում: Էրզրումում շատ կալանաւորութիւններ կատարվեցան և Թիւրքաց պատերազմական մինիստրութիւնը շատ խիստ զգուշացնող միջոցներ է սկսում գործ դնել:

—«Polit. Corresp.» լրագրին Կ. Պոլսից գրում են որ այնտեղ եւրոպական—քաղաքականութեան այժմեան ընդմիջումը մի հանդարտութիւն են համարում փոթորկից առաջ, որին անպատճառ պէտք է ենթարկվի Թիւրքիան: Թիւրքերը իրաւացի են անհանգստանալով, որ նրանց վրա դրսից կայծակի ամպ կընկնի: Թիւրքերին մանաւանդ վտանգաւոր է թւում Անգլիան, որ իբր թէ մտադիր է պահանջել սուլթանից վերականգնել սահմանադրութիւնը: Նոյնպէս լուրեր են տարածված, որ եթէ Բ. Դուռը չի կատարի իր պարտականութիւնները Փոքր-Ասիայի մէջ վերանորոգութիւններ մտցնելու մասին, Անգլիան, հիմնվելով Կիպրոսեան դաշնագրի իրաւունքների վրա, սկզբից կը սպառնայ ծովային ցոյց անել: Առհասարակ Անգլիայի գործողութիւնները Եգիպտոսում և հայկական խնդրի բարձրացնելը սասարիկ անհանգստացնում է Թիւրք պաշտօնեաներին, որոնք սարսափով սպասում են լորդ Դիւֆերինի Կ. Պոլիս վերադառնալուն: Պ. Գօշէն այդ մարկանցից իրան աւելի հեռու էր պահում քան թէ Լայարդ, իսկ լորդ Դիւֆֆերին նրանց մի ահարկու անհասանելի էակ է թւում: Անգլիական նախկին դեսպանները աշխատում էին գոնէ անձնական բարեկամական յարաբերութիւններ պահպանել սուլթանի հետ: Սեր Լայարդ սուլթանից ընծաներ էր ստանում և չէր քաշվում ընդունել կաթ և հացեր, որոնց նրան ամեն օր ուղարկում էին սուլթանի պալատից: Ընդհակառակը լորդ Դիւֆֆերին սկզբից հասկացրեց, որ իրան կատարելապէս պաշտօնական անձնաւորութիւն է համարում, որ միայն պաշտօնական յարաբերութիւն պէտք է ունենայ սուլթանի պալատի հետ և որ նա լաւ է համարում սուլթանից ընծաներ չըստանալ: Լորդ Դիւֆֆերին առհասարակ շատ քաղաքավարի մարդ է, բայց ամենքից լաւ իմանում է անքաղաքավարի գտնվել, պահպանելով մի և նոյն ժամանակ քաղաքավարութեան արտաքին ամենանուրբ ձևերը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԿՕՍՏՐՕՄԱ, 8 յունիսի: Եպիսկոպոս Իգնատիյ վախճանվեցաւ:

ՓԱՐԻԶ, 8 յունիսի: Ֆրանսիացիների դրութիւնը Մադագասկարի վրա ամրացաւ: Տաննանարիվա-Մագամբօ վերցրած է: Գավասները փախան: Գրաւված երկիրը պաշարված դրութեան մէջ է յայտնված: Հարաւ-արևմտեան Տունիսի մէջ խռովութիւն կայ: Ա յնտեղ զօրքեր են ուղարկված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունիսի: Գեներալ Գուրկո նշանակված է Վարշավայի գեներալ-նահանգապետ: Կառավարչական հաղորդութիւն. 1882 թուականի աշունքին ներքին գործերի մինիստրութիւնը միջոցների ձեռնարկից մօրեխի դէմ մաքառելու համար հետևեալ նահանգներում: Աստրախանի, Սամարայի, Վարշավայի, Խերսօնի և Խարկովի: 1883 թուականի գարնանը

Նրան կամ նրա վերաբերմամբ սխալվել եմ:

—Չէս ցանկանում արդեօք մէկ ուրիշ բան,—դիմամբ հարցրի ես նրան այն ժամանակ.—ես հոգով համակրում եմ քեզ և կը ցանկանայի ապացուցանել այդ: Ասա, ինչ ես կամենում դու:—Նա մի փոքր յապաղում էր, բայց երբ ես թախանձանքով, մինչև անգամ ջերմութեամբ բռնեցի նրա ձեռքը, նա ասեց.—Ուրեմն ուսուցէք ինձ:—Ինչպէս,—հարցրի ես, չը հասկանալով նրա ցանկութիւնը: Նա ձեռքով մատնացոյց արաւ աստղերի վրա, որոնք փայլում էին հորիզոնի վրա:—Ասեցէք ինձ, այդ ինչ բան է: Ինչն է բռնում արեգակին և լուսնին երկնքի վրա: Բացատրեցէք ինձ Աստուծու այդ հրաշքները: Ծաղիկները ինչի են աճում և թառամում: Ինչի են ծնվում կենդանիները, եթէ նրանք կրկին պէտք է անհետանան, և ինչպիսի է մարդկային վիճակը:—Ես նայում էի նրա վրա, բռնելով նրա ձեռքը խիս մէջ,—և արտասուքները դուրս թափվեցան աչքերից, այնպէս զուրթս չարժեց այդ պարզամիտ ձգտումը դէպի գիտութիւն և դէպի ճշմարտութիւն:

—

Կոմսը երեք շաբաթ է արդէն, որ ուսուցանում է Մարցելլային: Նա առաջվայ պէս եռանդով աշխատում է և ամեն գործ կարողանում է իր ժամանակին կատարել: Հէնց որ վերջացնում է իր ամենօրեայ հայեցողութիւնը կալուածքում, նա ձիով գնում է Ցօլօքաղ: Սովորաբար նա գնում է այնտեղ, երբ արդէն արևը մայր է մտնում: Մարցելլան տան առաջ դիմաւորում է նրան, փայփայում է նրա ձիու բաշը և հէնց որ իջնում է նա ձիուց, ինքն է տանում նրան ախոռը:

—Ցողնել լաւ չէք,—հարցնում է նա նրան, եթէ նա իսկոյն չէ կամենում դասաւորութիւն ընկալել:

—Ես երբէք չեմ յոգնում,—ժպտալով պատասխանում է նա, սրբում է իր թաց ճակատը և գրքերն առնում է ձեռքը: Նա սովորեցնում է նրան կարդալ, գրել, և հաշուել, բայց խիստ պահանջող չէ և բաւականանում է փոքր յառաջադիմութիւններով. նա ոչ միայն ուսումնարանի վարժապետի նման չէ, և առաւել ևս զուրկ է գիտնական սոփեստի յատկութիւններից. ինչ բանին, որ նա ձեռնարկում է, իսկոյն և եթ կեանք է առնում նրա շրթունքներում: Տգէտ գեղջկուհին հետևում է նրա իւրաքանչիւր խօսքին և նրա առաջ յարութիւն են առնում գերեզմանից հնութեան հերոսները և ընկնում է վարագոյրը բնութեան գաղտնիքներից: Կոմսը գրքեր նոյնպէս տանում է նրա համար և ծանօթացնում է նրան այն բանաստեղծների հետ, որոնք հարստացրել են նրա մայրենի լեզուն իրանց անմահ ստեղծագործութիւններով: Նա սկսում է Կօլցովի գեղեցիկ ոտանաւորներից, որոնք կարծես թէ բղխել են ժողովրդական հոգուց, այդ պատճառով և կատարելապէս ժողովրդական են դարձել, յետոյ կարդում է նրա մօտ Գօգոլի «Մեռած Հոգիները», Պուշկինի «Օնէգինը» և Տուրգենէվի «Որսորդի Օրագրութիւնները:»

Երբ որ նա կրկին ձի է նստում, Մարցելլան բռնում է նրա ասպանդակը և իրան վայելած բարերարութեան համար, սրտից քղխած անկեղծ խօսքերով շնորհակալութիւն է յայտնում, իսկ մէկ անգամ նա մինչև անգամ բռնեց նրա ձեռքը և համբուրեց:

Ես տեսնում եմ, որ բարեկամս սկսեց Դէօթէի Ֆաուստով պարապել:

—Ֆաուստի մենութիւններն ես դրում,—հարցնում եմ նրան:

—Ոչ, ես միայն թարգմանում եմ այդ գրվածքը:

—Տուր տեսնեմ:—Ես վերցնում եմ մի թերթ նրա սեղանից և տեսնում եմ Ֆաուստը մալօրօսական լեզուով և արձակ թարգմանված: Մտադիր չես արդեօք տպել այդ:

—Ամենևին. ես թարգմանում եմ Մարցելլայի համար:

—Ֆաուստը Մարցելլայի համար:

—Ինչի չէ:

—Որովհետև դու երեք շաբաթ է արդէն պարապում ես նրա հետ, ասա ինձ անկեղծաբար, ճշմարիտ դու կրթութեան ընդունակ ես գտնում նրան:

—Ես դեռ ևս ոչ աքին չեմ հանդիպել,—պատասխանեց կոմսը,—որ այնքան բուռն ցանկութիւն ունենար ճշմարտութիւնը ճանաչելու, որպէս Մարցելլան: Եւ ինչպէս նա արագ հասկանում է բոլորը:

—Հասկացար դու նրա հոգին, նրա բնաւորութիւնը:

—Այո,—նկատեց կոմսը,—նրան կամակոր են անուանում, թէպէտ նա ոչ աքին չէ հակառակում, բայց այն ևս ճիշդ է, որ նա երբէք չէ համաձայնվում ուրիշների հետ, այլ խաղաղ գնում է իր ճանապարհով և այնու ամենայնիւ վերջի վերջոյ այնպէս է վարվում, ինչպէս որ ինքն աւելի լաւ է համարում. նրան հարատ են ճանարում, բայց նրա մէջ կայ ազնիւ աղջկայ սրտաչարժ հպարտութիւն և մի տեսակ բնածին վեհութիւն. նա չը գիտէ անդադար կարմրելու յիմար ձևը, գիւղական աղջիկների ձևերը և ուրիշ մինչև անգամ կրթված ջահիլ աղջիկների ձևերը և համարձակ նայում է իրաքանչիւրի աչքերին: Նա ծածկամիտ աղջկայ համբաւ ունի, և ուղիղ է որ նա մի փոքր անվրդով և լուռ է, բայց այդ պատճառով ամեն բան տեսնում և լսում է: Կարծում եմ, որ նա կը ցանկանար ներշնչել ամբողջ աշխարհը, ոչ թէ հետաքրքրութիւնից, այլ իր հոգու աչքերով, և այն բոլորը ինչ որ նա տեսնում է, նրա համար անհետանալ չէ անցնում: Նրա ամբողջ էութիւնը ինձ վրա սեփական արժանաւորութեան ընծին և ախորժելի ճանաչողութեան տպաւորութիւն է գործում: Ես երբէք չեմ տեսել նրան ոչ տրտում, ոչ կայտառ. նա շատ քիչ է ծիծաղում, բայց նրա դէմքի վրա երևում է մշտական քաղցր պայծառութիւն, ներքին հոգեկան բերկրութիւն: Շատ բաներում նա նման է իր հօրը: Առհասարակ, իմացած եղիր, երբ քեզ համար կին ընտրելու լինես, նախ և առաջ նայիր հօրը, յետոյ մօրը, և եթէ կարելի է, պապերին էլ: Մարցելլայի մեծ մայրը իմ ծծմօր աղջիկն է, իսկ հայրը:—Ինչպիսի մարդիկ են դրանք,—նա ճշմարիտ որ լաւ ցեղից է:

—Նրա հայրը ինձ կասկածոտ է երևում:

—Նա հէնց այդպէս է,—բացականչեց կոմսը,—դա մեր գիւղացու տիպն է, որպէս առաքինութիւններով, նոյնպէս և պակասութիւններով. խելօք, լուռ, կասկածոտ և վերին աստիճանի բարեսիրտ. որպէս կամքը, նոյնպէս և նրա կամակորութիւնը ունեն մի տեսակ անպարզելի ծաւալականութիւն. դժուար է յորդորել նրան, բայց առաւել ևս դժուար է մի բանի մէջ համոզել. նա ամեն տեսակ հնութեան կողմնակից է, ամեն բանի մէջ զգաստ է, բայց երբ որ մէկ անգամ կը համոզվի մի բանի մէջ, այն ժամանակ գործում է իր ծանրաքաշ անձի բոլոր եռանդով, որպէս մի քար, որը դժուար է շարժել, բայց որը ոչ ոք չէ կարող կանգնեցնել, երբ նա գլորվում է:

(Կը շարունակվի)

շուտ ձեռնարկված է լրացուցիչ միջոցների և նշանակված է դրամական օժանդակություն։ Մորեխի ոչնչացնելը ամեն տեղ բաւական աջողվեցաւ, այնպէս որ կարելի է յուսալ վերջ դնել այդ վնասակար միջատի տարածմանը։ Իսկ բարեյաջող հետեւանքներին շուտ հասնելու նպատակով ուղարկվում է Վարշավայի և նրա մօտակայ նահանգները ներքին գործերի մինիստրության մէջ ծառայող նորին Մեծության սվիտայի գեներալ-մայոր Շեբեկա։ Մայիսի 28-ին բարձրագոյն հաստատված է պետական խորհուրդի կարծիքը հեռագրատան մէջ ծառայող կանանց թոշակ տալու մասին։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ այսուհետև սենատի ընդհանուր ժողովների վճիռները վերջնական կը համարվեն և այլ ևս չեն ներկայացնվի պետական խորհուրդին, որի գործունեությունը բուն օրէնսդրական կը լինի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ նօբել ընկերությանը թոյլ է տուած երկրորդ անգամ օբլիգացիաներ հրատարակել երեք միլիոն բուբլ դումարի նախկին գներով։

ՎԱՐՇԱՎԱ, 8 յունիսի։ Բուրդի տօնավաճառը պաշտօնապէս փակված է։ Գները առհասարակ առաջվանից բարձր են։

ՎԻՒՐՅԲՈՒՐԳ, 8 յունիսի։ Երէկ համալսարանական կլինիկայի մէջ պրոֆէսսոր Միխել կոմս Տօլեբենի աչքը ենթարկեց օպերացիայի, որը կատարելապէս աջողվեցաւ և յոյս է տալիս տեսության առողջանալու համար։ Կոմսը կը մնայ կլինիկայի մէջ մինչև առողջանալը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի։ Ռուսաստանի մէջ հացի դաշտերը լաւացնող անձրևները բարերար ազդեցություն գործեցին նոյնպէս և Ռումինիայի և Գերմանիայի մէջ։ Գերմանիայի մէջ ցանքսերը լաւացան և աջող հունձի են սպասում։ Անգլիայի մէջ ցորենը շատ լաւ է հասնում պարզ և չոր եղանակի շնորհիւ, բայց գարնան ցանքերի համար անհրաժեշտ են անձրևներ։ Առհասարակ Անգլիայի մէջ հունձի յոյսերը շատ են խոստանում։ Միացեալ Նահանգների մէջ ցորենի դաշտերի դրությունը շատ լաւացաւ, միայն Կալիֆորնիայի հունձը որոշվում է 20 կամ 25% պակաս անցեալ տարվանից։

ՍԿՈՒՏԱՐԻ, 9 յունիսի։ Բոսնիական ցեղերի առաջնորդների մեծամասնությունը հընազանդվեցան Թուրքիային։ Ապստամբությունը վերջացրած է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի։ Երէկ Պետերգոֆի պալատի մէջ տեղի ունեցաւ քաղաքական և զինուորական ծառայողների մեծ ընդունելություն, նոյնպէս ներկայացան Թագաւորին և աղ ու հաց մատուցին հետևեալ պատգամաւորությունները. Օդէսայի առևտրականների, Կամենեց-Պոդոլսկի նահանգի վոլոսների սըտարշինները, Կազանի և Աստրախանի նահանգների ազանդաւորների քահանայությունն ընդունողները։ Բոլորին նախաճաշիկ առաջարկվեցաւ։ Պալատական մինիստրը ուղևորվեցաւ մի քանի ներքին նահանգները ձիաների պետական աճեալատեղիները նայելու համար։ Մինիստրը կը վերադառնայ յուլիսի սկզբին։

ԲԵՐԼԻՆ, 9 յունիսի։ Նէյսսէ գետը Սիլեզիայի մէջ դուրս եկաւ ափերից և Նէյս քաղաքի մէջ սարսափելի աւերումներ գործեց։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ հողի մի քանի կտորներ ծախվում են էժան նաբէրէժնայա փողոցի վրա, ոչ հեռու նոր կամուրջից։ Հարցնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ։ Նոյն տեղը Բոմազէյի տղամարդկանց և կանանց թամքեր և զանազան ուրիշ ապրանքների մեծ ընտրություն ծախվում են շատ էժան։

10—10

Զատկի տօնի պատճառով

ԼՕՆԴՕՆՍԿԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

(Կամերչեսկի բանկի տակ, Զուբալովի տներում)

Նշանակուած է ամենանուագեցրած գներ արտասահմանեան խմիչքների վրա։

Ռոմ բութիլը		ր. կ. 1—20
Կոնեակ	90 կ. և	1— »
Աբսենդ		1—50
Խիննի գինի		1—50
Պօրտվեյն և խերէս . . .		»—90
Օղի 40°		»—45
Ամենաընտիր լիկեօր . .		1—35

Երեխանց և մարդոց կռատներ ու նոտեր անհամեմատ արժան գներով։

Մեծ քանակութիւն զալանտերէյնի ապրանքների։

Ամենալաւ սեռաւ թէյ ֆունտը 1 ր. 20 կ. մինչև 2 ր. 40 կ.։

Արտասահմանից ստացվածներ

ЖЕСТЯНКА 20 ЧАШЕКЪ 1 РУБ.

ПРИ ТРЕБ: ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

(5. 10. 25) 7—24

ԳՈՒՆՇԻ կարամել։ ԲՕՄԻ ՀԱՄ։ ՄՐԳԵՐՈՎ լցված։ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ բոլոր քաղաքներում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴՈՒՄ տօնավաճառի ժամանակ հասցէն. Сѣмянный рядъ д. Муратова.

3—10 (1)

«ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

Հրատարակութեամբ լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի հայ-գրավաճառների մօտ ընտիր մատենագիրք՝

«ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

524 երեսից բաղկացած։ Գինն է 1 բուբլի։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել նա և վարչության գրասենեակը, այս հասցէով. Въ Правленіе Тифлисскаго общества изданія армянскихъ книгъ». Фрейлинская улица, домъ С. Корганова, № 4.

ԶՐԻԱԳԷՍ

կազմում եմ ԽՆԴԻՐՔՆԵՐ դատաստանական, վարչական և հասարակական հիմնարկությունների համար։

ՀԱՍՑԷՍ. Զուզուրէթ, Նօվօ-Գօնչարնայա փողոց, տուն Դաւիթ Մամուլովի, դէմ առ դէմ № 19 տան, հարցնել վերի յարկում։

3—3

ОТКРЫТА ПОЛУГОДОВАЯ ПОДПИСКА

НА ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЮРИДИЧЕСКІЙ ЖУРНАЛЪ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

Издаваемый въ г. Тифлисѣ.

(ГОДЪ ТРЕТІЙ)

Журналъ, какъ и прежде, выходитъ по четвергамъ, въ размѣрѣ отъ 1 до 2 печатныхъ листовъ, кромѣ приложеній, по прежней программѣ.

Пріемъ подписки, объявленій и розничная продажа: Тифлисъ, Сололакская улица д. № 10.

Подписная цѣна, съ пересылкою и доставкою, на полъ года 6 р. Полугодовые подписчикм могутъ вносить при подпискѣ 3 р. и чрезъ два мѣсяца еще 3 р. Подписка принимается на 3 мѣсяца—3 р. 20 к. и на 1 мѣсяцъ 1 р. 25 к.

ОТДѢЛЬНЫЕ НОМЕРА—25 КОП.

Объявленія, казенныя и частныя, по таксѣ за занимаемое мѣсто. Подписка и объявленія принимаются также въ Москвѣ и С.-Петербургѣ, въ книжныхъ магазинахъ И. П. Анисимова.

Редакторъ-издатель А. С. Френкель.

(Присяжный повѣренный)

2—3

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն։

23—100

ՎԻԷՆՆԱՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր լրագիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 բուբլ է, կէս տարվանը 4 բուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրության մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՒՔ, զանազան աթոռներ 35 բուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոգաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուրթներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մեսալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժէի, մելխիորի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ ռէվոլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. ԹԷՑ ՊՕՊՕՎ եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՅՆԴԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (ՕՂԼԿՕՅՕՆ) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

30—100

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Іюня 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.